



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ՏԻՄՈԹԵՈՍ ՎՐԴ. ՏԷՐ-ԿԻՒԼԵԱՆ՝

«Պատուական է առաջի Տեառն մահ սրբ-բոց իւրոց» կը զոչէ սաղմոսերդուն. եւ ա-մէն անգամ, երբ Ս. Ղազարու զանգակա-տունէն կը ծաւալին սուգի բամբ հնչիւն-ները, ընդհատ ու խորհրդաւոր, հորիզո-նին վրայ ինծի համար կը զծագրուի պատ-կերը մեռնող տիտանի մը՝ որ թեւեր առած կը բարձրանայ յաղթանակի խորանին վը-րայ, խլելու համար լուսաշող պսակը փառքի։ Ու Աստուած կ'իջնէ այնտեղ, պսակելու իր հաւատարիմ ծառան, որուն մահը՝ պատուական է երկնքի առջեւ. իս-կապէս պատուական, որովհետեւ սկիզբն է երանութեան եւ յաւերժական կեանքի։ Կը հաւատանք որ այդ երանական կեանքը Հ. Տիմոթէոս Վրդ. Տէր-Կիւլեանի համար սկսաւ Օգոստոս 23ի յետմիջօրէին։ Ութ-սուն տարիներու առաքելական վաստակը ուսին՝ կանգնեցաւ յաւերժութեան սեմին։

Կեանքը զոր վարած էր ան՝ մշտապէս խաչակրութիւն մը եղած էր, չղթայ մը զոհողութիւններու եւ անձնուրաց ծառա-յութիւններու — ինչպէս կը խորհրդածէինք ողբացելին քահանայութեան յիսնամեա-կին առիթով («Բազմ.» 1956, թ. 6-8, էջ 182) — ի սպաս Միաբանութեան եւ ի սպաս հայ մանուկներու. Արեքսանդրապո-լէն Վենետիկ, Մոսկուայէն Պոլիս, Խրի-մէն Հոռոմ. ահա իր գլխաւոր առաքելա-վայրերը, ուր ցանաւ էր միշտ հայրական սիրոյ ջերմ ծագիկներ հրաւրու, որոնք որոնք ալ ուր կու գան կապմել չքնաղ դափ-նեպսակը իր պարզունակ շիրմին։

Ծնած էր Արեքսանդրապոլ, 1880ի Հոկ-տեմբեր 8ին։ Ս. Ղազար կը մտնէր 1897ի

Սեպտ. 7ին. մեծն Ալիշանի եւ Զարհանա-լեաններու շունչին տակ մեծցած, 1906ին կը բարձրանար քահանայութեան սուրբ առաքելականին։ Աստուածաբանական ու-սումները կ'աւարտէր Հոռոմի մէջ, համա-լսարանական վկայականով 1909ին։ Այ-նուհետեւ կը սկսէր իր յիսնամեայ ողիսա-կանը, որուն մանրամասն պատմութիւնը տուած ենք նախապէս, աւելի ուրախ պա-րագաներու տակ։

Սիմֆերոպոլ, Թէոդոսիա, Սեւաստո-պոլ, Կերչ. ահա իր առաքելական պաշտո-նավայրերը մինչեւ 1915 թուական. ու կը սկսի հայութեան տխուր թուականը։

Տրապիզոն, Պաթում, Թիֆլիս, Վլաստի-կաւկաս, Եկատերինոպոլ, Միսք, Պոլիս. ահա իր աստանդական պաշտոնավայրերը մինչեւ 1919 թուականը, արիւնի եւ կրակ-ներու ընդմէջէն. այս անգամ հետեւ ունի քառասունի չափ որբեր (մինչեւ 70 կը բարձրանայ անոնց թիւը) որոնց հետ կ'անցնի սահմանէ սահման, փրկելու հա-մար նահատակներու այդ փոքրիկ սե-րունդը. անոնցմէ ամէն մէկն ունի կար-միր յուշամատեն մը։ Զաւէճ Սիւրմէլեան միակն է որ պատմութեան յանձնած է անձնանուէր Վարդապետին անխոնջ մաս-տակները, նկարագրելով հարիւրէն մէկը։

Մինչեւ իր վերջին օրերը, ողբացելով Հ. Տիմոթէոս Վրդ. կ'ապրէր իր սիրելի որ-բերուն հետ. անոնք թէեւ ցրուած աշխար-հի չորս կողմերը, այսօր ընտանիքի եւ զիրքի տէր անձեր, մտաւորականներ, բը-ժիշկներ, սակայն դեռ կ'ապրէին իրենց սիրելի Վարդապետին սրտին եւ յիշողու-

թեան մէջ. կ'ուրախանար անոնց յաջողու-թիւններու լուրերով եւ ուրախութեան արցունքը կը փայլէր իր աչքերուն մէջ. իր որբուկները մարդ եղած էին եւ պար-ծանք հայութեան։

1922-1935 զինք կը զտնենք Հոռոմ, դաս-տիարակ Միաբանութեանս ուսանողնե-րուն. միաժամանակ Ուխտիս Ընդհ. Գոր-ծակալ՝ Ս. Աթոռին մօտ։

1935-46 ձեռնհասօրէն կը վարէ Միա-բանութեան Ընդհ. Մատակարարի պաշ-տպատօնը, ատեն մը միաժամանակ Խոսնա-նելով նաեւ Միսիթարեան Տպարանի Տես-չութիւնը (1936-40)։


1946-1949 Կ'անցնի Եզրապոս, իբր Մե-ծաւոր Աղեքսանդրիոյ Միսիթարեան վար-ժարանին։

Ահաւասիկ ողբացելով վարդապետին կեանքի հաշուեկիրը. միշտ պատնէշի վը-րայ, խրամէ խրամ առաջնորդելով իր զինուորները՝ որբեր, աշակերտներ, ժա-ռանգաւորներ։

Վերջին տասը տարիները, հիւանդապին, առանձնացած, համբերատար ու զուարթ, կ'ապրէր անդրաշխարհի սեմին, ամէն վայրկեան կարծէք լսելով յետին զանգը։ Իր ժամերը կ'անցնէր՝ թաղուած երկնա-յին խոկումներու մէջ, երկարատեւ աղօթ-քի նուիրուած. կ'ապրէր Եզրէի բնաբա-նով, «Մահ իմացեալ՝ անմահութիւն»։

Իր մահը արդարեւ հանգիստ ու խաղաղ նինջ մը եղաւ, առանց տառապանքի, ա-ռանց ցաւատանջ խռովքներու. մահ ար-դար մարդու, որ գիտակից կը հեռանայ այս աշխարհէն։

Վատահ ենք թէ իր աղօթքով հիմա եր-կրնքէն աւելի աղղու պիտի բարեխօսէ Միսիթարեան Ուխտին վրայ, ինչպէս նաեւ իր երբեմնի սիրելի որբուկներուն սրտին մէջ։



Անբասիր եւ անձնուէր եկեղեցականի իր պայծառ օրինակը թող հրաւրէ եւ քաջա-լերէ նորանոր սերունդներ, հետեւելու իր լուսաշող հետքերուն։

Յարգանքով խոնարհած իր անպաճոյճ զերեղմանին վրայ, որ միակ փառքն է ա-մէն Միսիթարեանի, արցունքով օծուն մեր ջերմագին աղօթքը կը ձօնենք ամենաբա-րին Աստուծոյ, միսիթարութիւն հայցելով հանդուցեալ Հ. Տիմոթէոս Վրդ. Տէր-Կիւ-լեանի հեռաւոր ու մօտաւոր բոլոր սիրե-լիներուն։

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԷՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ